

Հայտարարություն

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանը հայտարարում է **ներքին մրցույթ՝** Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետի (**ծածկագիր՝ 97-1.2-Մ2-1**) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար: Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետի (**ծածկագիր՝ 97-1.2-Մ2-1**) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված գործառույթների, իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպման լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում՝ **կցվում է:**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի **քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 97-1.2-Մ2-1)** քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար անցկացվող ներքին մրցույթին մասնակցել ցանկացողները **պետք է անձամբ ՀՀ Սյունիքի մարզպետարան (ք. Կապան, Նժդեհի 1) ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

1. դիմում՝ (Ձև 1՝ լրացվում է տեղում)։
2. անձնագիր և/կամ նույնականացման քարտ՝ պատճեններով (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանք կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանք՝ պատճեններով)։
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով։
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ՝ պատճենով։
5. արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական՝ պատճենով, կամ համապատասխան տեղեկանք։
6. մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի։

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2020 թվականի մայիսի 25-ից մինչև 2020 թվականի հունիսի 5-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը:

Մրցույթի **թեստավորման փուլը** կանցկացվի 2020 թվականի հուլիսի 1-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Սյունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Կապան, Նժդեհի 1):

Մրցույթի **հարցազրույցի փուլը** կանցկացվի 2020 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 11:00-ին, ՀՀ Սյունիքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Կապան, Նժդեհի 1):

Մրցույթի **հարցազրույցի փուլը** կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը՝ 212309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր իննը) դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

Թեստում ընդգրկվող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են հետևյալ բնագավառներից՝

- «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք. հոդվածներ՝ 4, 6, 10, 12, 20, 24.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138910>
- Քաղաքացիական օրենսգիրք, գլուխ 11, հոդված 188, գլուխ 12, հոդված 192, գլուխ 13, հոդվածներ՝ 204, 204¹, 206.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141434>
- Հողային օրենսգիրք. գլուխ 1, հոդված 3, գլուխ 2, հոդվածներ՝ 6-8, գլուխ 3, հոդվածներ՝ 9-11, գլուխ 10, հոդված 31, գլուխ 12, հոդվածներ՝ 41-43.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142048>
- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրք. գլուխ 11, հոդվածներ՝ 152², 154, 154¹.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142605>
- «Քաղաքաշինության մասին» օրենք. գլուխ 1, հոդվածներ՝ 2, 3, 4, գլուխ 3, հոդվածներ՝ 6, 9, գլուխ 4, հոդվածներ՝ 10, 10.1, գլուխ 6, հոդված 14, գլուխ 6², հոդված 14², գլուխ 8, հոդվածներ՝ 20, 23, 25.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140929>
- «Տեղական ինքնակառավարման մասին» օրենք. գլուխ 4, հոդվածներ 35, 42, գլուխ 8, հոդված 95.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142042>
- «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենք. հոդված 3.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=140218>
- ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին» N 596 որոշում.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126977>
- ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և ՀՀ 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920 որոշում.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135745>
- ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «Հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (տարածական պլանավորման փաստաթղթերի) բացակայության դեպքերում քաղաքաշինական գործունեության իրականացման և հողամասերի գործառնական նշանակության փոփոխության կարգը հաստատելու մասին» N 828 որոշում.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=99374>
- ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» N 1918 որոշում.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135744>
- ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքները կառուցապատելու կանոնակարգման միջոցառումների մասին» N 2404 որոշում.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131590>

- ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N 792-Ն որոշում.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82045>
- ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական եվ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի եվ օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշում.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130665>
- ՀՀ 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշում.
հղումը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135339>
- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012.: § 1.1-1.3, § 2.1-2.3, § 3.1, § 3.3, § 3.4, § 5.2, § 5.6, § 6.1-6.3
հղումը՝ <http://fliphtml5.com/fumf/egdx>
- Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013: § 1.1, § 6.3, § 8.1
հղումը՝ <http://online.fliphtml5.com/fumf/irey/#p=2>

Թեստումը նդգրկվող կոմպետենցիաների վերաբերյալ թեստային առաջադրանքները կազմված են տվյալ պաշտոնի համար սահմանված նշանակալի հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքի ներքին կայքէջում՝ <https://www.gov.am/am/announcements/item/346>/հրապարակված ընդհանրական կոմպետենցիաներից, մասնավորապես՝

- «Խնդրի լուծում»

Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

- «Հաշվետվությունների մշակում»

Հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

Մրցույթին մասնակցել ցանկացողները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Կապան, Նժդեհի 1), հեռախոսահամար՝ (0285)4-42-75, էլ.փոստի հասցե՝ syunik.anznakazm@mail.ru:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) քաղաքաշինության վարչության (այսուհետ՝ Վարչություն) ճարտարապետաշինարարական բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (այսուհետ՝ Գլխավոր մասնագետ)
(ծածկագիր՝ 97-1.2-Մ2-1):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, ք. Կապան, Նժդեհի 1:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

- իրականացնում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմման և կառավարությանը հաստատման ներկայացումը.
- իրականացնում է մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ կառավարությանը առաջարկությունների ներկայացումը.
- իրականացնում է բնակարանային և այլ շինարարության, կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառությունների, քաղաքաշինական գործունեության հսկողության, ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.
- իրականացնում է դատախազությանը ինքնակամ կառուցապատման դեպքերի հայտնաբերման վերաբերյալ հաղորդումների ներկայացումը.
- իրականացնում է հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան քաղաքաշինական գործունեության օբյեկտների ընտրման, ներդրումների չափի որոշման, պայմանագրային հիմունքներով օբյեկտի քաղաքաշինական փաստաթղթեր մշակողների և շինարարություն իրականացնողների ներգրավումը.
- իրականացնում է մինչ շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում, կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ, համաձայնեցումը.
- իրականացնում է քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների

գործունեության վերահսկումը.

8. իրականացնում է քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության իրավական և մասնագիտական հսկողության անցկացումը.
9. իրականացնում է համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքերի հայտնաբերման, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա տեղական ինքնակառավարման մարմիններում ըստ անհրաժեշտության ստուգումների անցկացումը.
10. հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում, քաղաքաշինական գործունեության նպատակով, իրականացնում է համայնքների ղեկավարների կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունների համաձայնեցման և պետական կառավարման համապատասխան լիազոր մարմիններին առաջարկությունների վերաբերյալ եզրակացությունների ներկայացման գործառույթներ.
11. իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական միջոցների հաշվին, մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացված աշխատանքների ավարտական, հանձնման-ընդունման գործընթացին առնչվող փաստաթղթերի (ակտերի) նախապատրաստումը.
12. իրականացնում է պետական կառավարման լիազոր մարմինների հետ համայնքի գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը.
13. իրականացնում է պետական կառավարման լիազոր մարմինների հետ բնակավայրի գոտևորման նախագծի մշակման առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը.
14. իրականացնում է առանց հողի կատեգորիայի փոփոխության քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառական նշանակության փոփոխության վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկության համաձայնեցման կամ հիմնավորված մերժումը:

Իրավունքները՝

- համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ իրականացնել առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներ.
- իրականացնել համապատասխան մարմիններից օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ տեղեկատվություն պահանջելու գործընթացը.
- իրականացնել համապատասխան մարմիններից պայմանագրում նշված կետերի կատարման վերաբերյալ փաստաթղթերի համապատասխանելիության և տեղեկատվության ներկայացման գործընթացը.
- ստանալ համապատասխան մարմիններից անհրաժեշտ հիմնավորումներ և այլ փաստաթղթեր.
- նախագծողների հետ իրականացնելու մասնագիտական քննարկումներ՝ ճշտելու տրված առաջադրանքի համապատասխանելիությունը.
- ստուգել նախագծում կատարվող փոփոխությունների և շինարարության թույլտվության համապատասխանելիությունը գործընթացը.
- ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն և իրականացնելու աշխատանքային քննարկումների կազմակերպման գործընթացը.
- ստանալ համապատասխան մարմիններից, համայնքների ղեկավարներից տեղեկատվություն, ինչպես նաև կատարված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումներ:

Պարտականությունները՝

- իրականացնել արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասների գնահատման, աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության

ներկայացումը Բաժնի պետին.

- իրականացնել կապալառու կազմակերպություններին տրվող փաստաթղթերի ստացումը, շինարարության ընթացքին հետևումը, ակտերի ընդունումը և օբյեկտի ավարտման ընդունման-հանձնման փաստաթղթերի ձևակերպումը.
- իրականացնել պայմանագրային կետերի կատարման վերահսկումը.
- Մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացված աշխատանքների ավարտական, հանձնման-ընդունման գործընթացին առնչվող փաստաթղթերի (ակտերի) նախապատրաստման համար իրականացնել ներկայացված փաստա-թղթերի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում,
- իրականացնել Մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող օբյեկտների ցանկի ուսումնասիրությունը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու համար, մասնակցելու որոշման կայացման նպատակով կազմակերպված քննարկումներին և ընտրված օբյեկտի վերաբերյալ կայացած որոշման նախագծի վերաբերյալ առաջարկության ներկայացմանը.
- իրականացնել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ սահմանված կարգով նախագծային կազմակերպությանը ներկայացման գործընթացին.
- իրականացնել շինարարության թույլտվության ներկայացումը կապալառու կազմակերպություններին և հետևել շինարարության ընթացքին.
- իրականացնել սահմանված կարգով ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից ստացած՝ օբյեկտի կառուցման և շահագործման տեխնիկական պայմանների ներկայացումը նախագծային կազմակերպությանը՝ նախագծերում ներառելու համար.
- հետևել արտոնագրված կազմակերպությունների կողմից վնասների փոխհատուցման վերաբերյալ հաշվարկների և պայմանագրային պարտավորությունների ժամկետների կատարման գործընթացին.
- իրականացնել հսկողություն շինարարության ընթացքի նկատմամբ, ավարտման կատարողական ակտերի կազմման, ընդունման-հանձնման և շահագործման աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում ներկայացնել զեկուցումներ Բաժնի պետին՝ օբյեկտներում իրականացվելիք կամ իրականացվող աշխատանքների վիճակի մասին.
- իրականացնել աշխատանքներ՝ ինքնակամ կառույցների հայտնաբերման ուղղությամբ և դրանց առկայության դեպքում՝ զեկուցել Բաժնի պետին:
- իրականացնել թերությունների արձանագրումը և վեր հանումը, ներկայացնել քննարկման Բաժնի պետին, առաջարկելով համայնքների ղեկավարներին վերացնելու դրանք:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն	
2	Ոլորտ	Ճարտարապետություն և շինարարություն	Ճարտարագիտություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ քաղաքաշինության կամ ճարտարագիտության բնագավառում երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մնշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Հասարակության հետ կապերի ապահովում
3. Ժամանակի կառավարում
4. Փոփոխությունների կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: